Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ի Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2022 թվականի օգոստոսի 29-ի N798 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2022 թվականի օգոստոսի 19-ի N429-Ա – N434-Ա, 2022 թվականի օգոստոսի 22-ի N435-Ա, 2022 թվականի օգոստոսի 23-ի N436-Ա- N439-Ա, 2022 թվականի օգոստոսի 24-ի N440-Ա - N443-Ա որոշումների վերաբերյալ.

ՈՒսումնասիրությամբ պարզվել է, որ որոշումների մեջ օրենսդրական տեխնիկայի կանոնների տեսակետից առկա են հետևյալ թերությունները.

1. N430-Ա, N433-Ա, N437-Ա որոշումների նախաբաններում հղումը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի դրույթին սխալ է կատարված:
2. N432-Ա, N433- Ա որոշումներով տրամադրված հասցեները չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 2-րդ կետի 7-րդ ենթակետի դրույթի պահանջին:
3. N435-Ա որոշման նախաբանում օրենսգրքի անվանումը թերի է գրառված:
4. N440-Ա որոշումը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթին, բացի այդ համայնքի անվանում կիսատ է գրառված:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Գ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Կատարող՝ Ռ. Գրիգորյան
28 սեպտեմբերի 2022թ.